

չտկարացան ու մեռնիլ գիտցան մեծ արիութեամբ: Բայց 1896ին, մա՛նաւանդ 1915ին, այդ արիութիւնը պիտի չըպակասէր գրեթէ մեր բոլորին...

Փողոցները պառկելով ու գիշերները բեռնակրի աշխատանքին յանձնառու ուսանողը, Ճեմարանի մէջ սրտառուչ ուսանող մըն էր, որ իր դպրոցին աւանդութիւնները ահա գործնապէս կ'արդիւնաւորէր, իր ծննդավայրէն հազարաւոր փարսախներով հեռու տեղերու վրայ իր փոքր անձնաւորութեան հսկայ փառքը ժուռ ածելով (պտտցնել): Չեմ կրնար լայննալ շատ, գէթ շեշտելու համար հոս գլխաւոր տարրերը այն վերլուծումին, զոր անիկա ըրաւ, շատ տաք, պերճ, հեքիաթունակ շեշտով մը, քեմարանական իր շրջանէն մարդերը, մտայնութիւնները, ձգտումները, ընդհանուր, հասարակաց զգացողութիւնը եւ ուսանողի շատ մասնակի, շատ ինքնատիպ հոգեբանութիւն մը խտացնող, յորդ, բայց յստակ տարագներով, որոնք ապրումին նպաստէն այնքան տիրաբար գիտեն օգտուիլ ու դիմանալ: Մօտ քառասուն տարիներ են անցեր այդ օրէն: Աւելի յետոյ, վաւերական գրողներու, առնուազն ստոյգ պատմողներու գրիչին տակ, ես տեսեր եմ ճեմարանական յղացքին ամբողջ բովանդակութիւնը: Ստիպուած եմ հոս յայտարարել, որ Մաթիկին ինծի տուածը թուղթէն, յիշատակէն վեր վկայութիւն մըն էր, գրեթէ արուեստի գործ մը, որ ահա կը դիմանայ, երբ կը գրուին սա տողերը: Վերը ըսի, թէ արմաշական մըն էի (եթէ երբեք մէկ տարուան իմ կեանքը այդ դպրոցին մէջ ինծի կու տայ իրաւունքը այդ որակականին): Հոս կը խօսիմ իմ բեկումէս, որ ա՛լ յստակ է, տարիներ ետքը, նոյն այդ դպրեվանքէն: Հազիւ տարի մը առաջ ես կը բաժնուէի Արմաշէն, որուն «Հոգին» Դուրեան սրբազանն էր, ինչպէս կը խօսէին ու կը գրէին քիչ մը ամէն տեղ: Կովարժ Ակոյի քարայրին մէջ, ես թելադրութեան ճամբով, Մաթիկէն ինծի հասնող գաղափարներու ալօսն ի վեր փնտուեցի, թէ ինչ կը բերէի իմ մեծ ուսուցիչներէս: Անոնցմէ մէկը մեծ բանաստեղծ մըն էր